ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը վերջերս 1970—1971 թթ. Հայկական ՍՍՀ պետական մրցանակները շնորհեցին գիտության ու տեխնիկայի բնագավառներում իրենց կատարած աշխատանքներով առավել աչքի ընկած մի խումբ աշխատողների:

Գիտության բնագավառում պետական մրցանակի է արժանացել ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս *Ա. Ղարիբյանը*՝ «Ռուս-հայերեն բառարանը» կազմելու համար: Այդ բառարանը, որ պրոֆ. Ղարիբյանի շուրջ 15-ամյա տքնաջան աշխատանքի արդյունքն է, արտահայտում է ռուս գրական լեզվի բառային կազմը: Այն կազմելիս հեղինակն օգտագործել է վերջին հիսնամյակի ռուս բառարանագրության նվաճումները: Նա ընտրել է նիշտ ու հատու օրինակներ բառերի բոլոր նշանակությունների համար, ըստ որում օրինակները առնված են ռուս գրական հեղինակային տեքստերից. այս հանգամանքը բառարանը գերծ է պահում իմաստնար օրինակներից, մի բան, որից չեն կարողացել խուսափել նախորդ շատ բառարանագիրները:

Հարյուրամյա ավանդույթներ ունեցող հայ բառարանագրության պատմության մեջ պրոֆ. Ղարիբյանի բառարանը պատվավոր տեղ է գրավում և, անշուշտ, նպաստելու է ռուս-հայերեն բառարանագրության զարգացմանը, երկար տարիներ սեղանի գիրք է լինելու բազմահազար այն ընթերցողների համար, ովքեր ռուսերենի միջոցով հաղորդակից են լինելու համաշխարհային գիտության ու մշակույթի գանձերին:

Գիտության բնագավառում պետական մրցանակի դափնեկիրներ են դարձել նաև կենսաբանական գիտությունների թեկնածու, ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի պտղատուների սելեկցիայի և տեսակների ուսումնասիրման բաժնի վարիչ *Ս. Ագուլյանը* և գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, նույն ինստիտուտի լեռնային պտղաբուծության բաժնի վարիչ *Պ. Կարանյանը*՝ «Պտղաբուծության գիտական հիմքերի մշակումը և դրանց արմատավորումը Հայկական ՍՍՀ լեռնային բարձրադիր գոտիներում» աշխատության համար:

Տեխնիկայի բնագավառում հանրապետության այդ բարձրագույն պարգևին արժանացել են ստեղծագործական երեք կոլեկտիվներ. Արզնու «Բյուրեղ» արդյունաբերական միավորման դիրեկտոր *Ա. Հարությունյանի* և Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի ֆիզիկա-քիմիական լաբորատորիայի վարիչ *Վ. Մարգսյանի* ղեկավարած կոլեկտիվի անդամները, մետաղահատ հաստոցների փորձնական գիտահետազոտական ինստիտուտի Անդրկովկասի մասնաճյուղի դիրեկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու *Ս. Կանդայանի* ղեկավարած գիտնականների ու ինժեներատեխնիկական աշխատողների խումբը և Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատի նախկին դիրեկտոր, սոցիալիստական աշխատանքի հերոս *Ս. Թումանյանի* ղեկավարած ինժեներատեխնիկական աշխատողների կոլեկտիվը:

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ III ՊԼԵՆՈՒՄԸ

Ս. թ. փետրվարի 29-ին Երևանի արվեստի աշխատողների տանը կայացավ Հայաստանի գրողների միության վարչության երրորդ պլենումը, որը լսեց և քննարկեց վարչության առաջին քարտուղար էդ. Թոփչյանի զեկուցումը՝ «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի որոշումը գրական-գեղարվեստական քննադատության մասին և մեր խնդիրները»: ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը, ասում է զեկուցողը, նշեց, որ չնայած կատարված զգալի աշխատանքին, գրական-գեղարվեստական քննադատության ներկա վիճակը չի համապատասխանում կոմունիստական շինարարության պահանջներին: Սովետական գրականության ու արվեստի զարգացման, ազգային կուլտուրաների փոխհարստացման, մարդու գեղագիտական դաստիարակության մեծ տեղաշարժերը չեն զբա-

նում իրենց խոր գնահատությունը: Նրբեսն, ցածրարժեք գործերը գնահատելիս, դրսևորվում են սուբյեկտիվիզմի, հաշտվողականության, մրտերմականության, խմբակայնության հակումներ, որը միայն կասեցնում է առողջ տրամադրությունների արմատավորումը: Հրապարակվում են նյութեր, որոնք նիշտ չեն գնահատում անցյալի արվեստի, պատմության, գրականության հարցերը: Անդրադառնալով հայ գրականադատության որոշ նվաճումներին անցյալի ու ներկայի գրական երևույթների գնահատության սասպարեզում, զեկուցողը ՍՄԿԿ Կենտկոմի որոշման լույսի տակ վեր է հանում այն թերությունները, որ կան մեր գրական կյանքում: Նա մասնավորապես ասում է, որ որոշ քննադատների անպատասխանատվությամբ ու լիբերալ հանձնարարականներով են հրապարակ գալիս թույլ, ցածրարժեք գործերը, որոնց քանակը փոքր չէ: Այդ բողոքությունը առկա է ինչպես սկսնակների առաջին գրքերի լույսընծայման, այնպես էլ ավագների հնացած ու անարժեք երկերի վերահրատարակման դեպքում: Դրա փոխարեն բարձրարժեք շատ գրքեր, ներկայացումներ, համերգային ծրագրեր ու ցուցահանդեսներ քննադատության տեսադաշտից դուրս են մնում:

Գրականագետ Ս. Սարինյանը խոսեց քննադատության մեթոդի ու մեթոդոլոգիայի, նրա ընդհանուր մակարդակի, հասարակական կոչման, պրոֆեսիոնալ ինքնուրույնության մասին: Նա կոնկրետ օրինակներով ցույց տվեց, որ սովետահայ գրականադատության առկա վիճակը գոհացուցիչ չէ:

«Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագիր Ստ. Կուրտիկյանը իր ելույթը նվիրեց գրական մթնոլորտի, գրող-քննադատ հարաբերության, տպագրվող քննադատական հոդվածների մակարդակի, գրական նոր սերնդի դաստիարակության, քննադատության կոչման հարցերին:

Գրականագետ Հր. Թամրազյանը նշեց, որ մեր գրականադատությանը պակասում են ինքնուրույն բովանդակությունն ու ստեղծագործական էներգիան, այն կտրված է կյանքի կենդանի երակից: Նա կոնկրետ առաջարկներ արեց ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի ու բուհերի գրականության ամբիոնների կողմից քննադատ կադրերի պատրաստման անհրաժեշտության մասին:

«Լիտերատուրնայա գազետայի» գլխավոր խմբագիր Ա. Զակովսկին անդրադարձավ սոցիալիստական ռեալիզմի, պատմական երևույթները մարքսիստորեն բացահայտելու և գնահատելու, գաղափարական պայքարը շրջացնելու հարցերին:

Պլենումում ելույթ ունեցան նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Մկրտչյանը, «Գարուն» ամսագրի խմբագիր Վ. Պետրոսյանը, գրականագետ Էդ. Չրբաշյանը, «Գրական թերթի» խմբագիր Ս. Հարությունյանը:

Պլենումը լիովին հավանություն տվեց ՍՄԿԿ Կենտկոմի որոշմանը:

Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ